

## News Release

15 նոյեմբերի, 2021 թ.

**«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը HSBC Հայաստանի կողմից ստացել է նվիրատվություն «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած երիտասարդների տնտեսական հզորացում» ծրագրի իրականացման համար**

«ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ն և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը (HSBC Հայաստան) ստորագրել են համաձայնագիր, որի շրջանակում բանկը 8,204,000 դրամի նվիրատվություն է տրամադրում «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած երիտասարդների տնտեսական հզորացում» ծրագիրն իրականացնելու նպատակով:

Ծրագիրն իրականացվում է «Ավրորա մարդասիրական նախաձեռնություն» բարեգործական հիմնադրամի, HSBC Հայաստանի և «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է խթանել հակամարտության հետևանքով տուժած երիտասարդների տնտեսական հնարավորությունները և զբաղվածությունը որակյալ կրթության, վերապատրաստումների, մասնագիտական կարողությունների և ձեռնարկատիրական հմտությունների բարելավման, ինչպես նաև ստարտափներ հիմնելու համար դրամաշնորհների տրամադրման և աշխատանքի տեղավորման միջոցով:

Ծրագրի շահառուները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած 17-35 տարեկան հայաստանաբնակ և Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխված երիտասարդներ են:

Ծրագիրն ունի հիմնական երեք բաղադրիչ՝ **«Կյանքի հմտությունների զարգացում և աշխատունակության բարձրացում»**, **«Մասնագիտական կարողությունների բարելավում»** և **«Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում»**:

**«Կյանքի հմտությունների զարգացում և աշխատունակության բարձրացում»**. «Կյանքի հմտություններ» և «Աշխատունակություն» թեմաներով դասընթացների նպատակն է զարգացնել շահառուների անհատական կարողությունները և աշխատանքային հմտությունները:

**«Մասնագիտական կարողությունների բարելավում»**. Երիտասարդ շահառուները կմասնակցեն մասնագիտական դասընթացների բարելավելու համար իրենց զբաղվածության հնարավորությունները:

Երիտասարդները, ովքեր մասնակցել են մասնագիտական ուսուցման կամ արդեն ունեն տեղական աշխատաշուկայում պահանջված մասնագիտություն, սակայն կարիք ունեն

## News Release

գործիքակազմի եկամտաբեր գործունեությունն սկսելու համար, ծրագրի միջոցով կատանան անհրաժեշտ աջակցությունը:

**«Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում».** Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացների համար կընտրվեն մոտիվացված և բիզնես մտածելակերպ ունեցող թեկնածուներ:

Ծրագիրը կաջակցի մի շարք երիտասարդների իրենց բիզնես գաղափարների մշակման գործում: Երիտասարդները ձեռք կբերեն բիզնես վարելու հմտություններ, նրանց կսովորեցնեն և կխրախուսեն ստեղծել նորարարական բիզնես մոդելներ և նախագծեր մենթորների աջակցությամբ: Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված առնվազն 10 կենսունակ փոքր բիզնեսներ կատանան նախնական կապիտալ՝ մեկնարկային ծախսերը հոգալու համար (բիզնեսի գրանցում, անհրաժեշտ սարքավորումների և հումքի ձեռքբերում և այլն):

Վերը նշված դասընթացների ավարտին մասնակիցներին կտրվեն հավաստագրեր:

### **HSBC Խումբ**

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 2,969 միլիարդ ԱՄՆ դոլար:

### **HSBC Հայաստան**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 7 գրասենյակների և մոտ 310 աշխատակիցների միջոցով:

2021 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 311 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲ-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

### **«ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ**

Հայաստանի Հանրապետությունում «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամն իր գործունեությունն սկսել է 1988 թ.-ի Սպիտակի կործանարար երկրաշարժից անմիջապես հետո: Հիմնադրամը երեխայակենտրոն կազմակերպություն է, որի առաքելությունն է ապահովել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների խնամքը՝ ընտանիքին մոտ պայմաններում: Ելնելով դրանից հիմնադրամն իր գործունեությունը ծավալում է երկու ուղղություններով՝ այլընտրանքային խնամքի ծառայություններ, ինչպես նաև ընտանիքների ամրապնդման ծառայություն՝ սոցիալական ծանր վիճակում գտնվող, անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին:



## News Release

### ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգային

ՍՕՍ Մանկական Գյուղեր Միջազգայինն անկախ, ոչ կառավարական, շահույթ չհետապնդող միջազգային կազմակերպություն է, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Բնաբուկում, Ավստրիա: Կազմակերպությունը մարդասիրական և զարգացման օգնություն է տրամադրում կարիքավոր երեխաներին և պաշտպանում է նրանց շահերն ու իրավունքները ամբողջ աշխարհում: Առաջին SOS մանկական գյուղը հիմնադրվել է 1949 թ.-ին Ավստրիայի Տիրոլ քաղաքում ավստրիացի բարերար Հերման Գմայների կողմից: Այսօր ՍՕՍ Մանկական Գյուղերը գործում են աշխարհի 137 երկրներում և տարածքներում: